Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյան
Կարեն Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՆԴԱՍՏԱՆԻ ԾԵՍԸ

Բանալի բառեր – Անդաստան, ծես, շքերթ, աշխարհի մոդել, աշխարհի առանցք, աշխարհի չորս ծագ, կաթողիկե, Ավագ խորան, Սուրբ Սեղան, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի:

Մարդկային բոլոր հանրությունները կազմակերպվում և գոյատևում են հստակ մոդելներով[1]: Այդ մոդելները կարող են արտահայտվել տարածության, ժամանակի ընկալման, գաղափարախոսության և մշակութային այլևայլ երևույթների մեջ՝ արտացոլելով խորհրդանշական ընկալումներ և պատկերացումներ: Դրանք ունեն արխետիպային բնույթ, այսինքն անպայմանական են և բխում են մարդկային հոգեկանից: Այդ մոդելների խաթարումը հանգեցնում է տարատեսակ արհավիրքների՝ ընդհուպ մինչև փոխակերպում կամ կործանում: Որպեսզի դա տեղի չունենա, մարդկային տվյալ հանրությունը մշակում և կիրառում է կոնկրետ արարողակարգեր և գործնական այլ միջոցներ:

Սույն հոդվածով մենք կանրադառնանք Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ծիսակարգերից մեկին՝ Անդաստանի կարգին: Այս ծեսը բնորոշ է միայն Հայ Եկեղեցուն և չունի զուգահեռներ այլ մշակույթներում: Այն միտված է պահպանել և ամեն անգամ վերահաստատել տիեզերքի Հայ Եկեղեցու դավանած քրիստոնեական մոդելը: Թեև այդ ծեսը, կարծում ենք, իր ակունքներով ավելի հին է, քան քրիստոնեությունը, այդուհանդերձ այն պահպանվել և մինչև օրս էլ կատարվում է եկեղեցական շրջանակից ներս, ինչի պատճառով էլ հիշատակվում է որպես եկեղեցական արարողակարգ:

Անդաստանի արարողակարգը

Տարվա ընթացքում Անդաստանի ծեսը կատարվում է հետևյալ տոն օրերին. Տեառնընդառաջին (Տրնդեզ), Ծաղկազարդին (Հիսուս Քրիստոսի Մուտքը Երուսաղեմ), Ս. Հարության տոնին (Զատիկ), Նոր Կիրակի կամ Կրկնազատիկին (Կանաչ-Կարմիր կիրակի), Զատկից հետո երրորդ և չորրորդ կիրակիներին, Սուրբ Խաչի Երևման տոնին (հինգերորդ կիրակի), Զատկից հետո վեցերորդ և յոթերորդ կիրակի-

[1] Ըստ Ա. Լոսևի՝ §Մոդելավորել չի նշանակում ցանկացած իրականության արտացոլում, այլ հարաբերակցել իրար միջև արտացոլման բոլոր տարրերը և դարձնել այն հստակ տրամաբանական համակարգ¦ (տես՝А. Лосев, Знак, символ, миф, М. 1982, с. 226): Աշխարհի մոդել ասելով պետք է հասկանալ տվյալ հանրությանը բնորոշ տարածա-ծավալային և ժամանակային-տիեզերական ընկալումները, աշխարհում դիրքորոշվելու մարդու տրամաբանական ալգորիթմը:

ներին, Քրիստոսի Համբարձման տոնին[1], Հոգեգալստյան տոնին, Կաթողիկե Ս. Էջմիածնի հաստատման տոնին, Տիրոջ Պայծառակերպության տոնին (Վարդավառ), Աստվածածնի Վերափոխման տոնին (Խաղողօրհնեք) և Սուրբ Խաչի Վերացման տոնին (Խաչվերաց):

Որոշ տոների դեպքում Անդաստանի ծեսը կատարվում է երկու անգամ՝ առավոտյան և երեկոյան ժամերգությունից առաջ կամ ընթացքում, որոշ տոների դեպքում՝ միայն առավոտյան կամ երեկոյան ժամերգության ժամանակ: Օրվա ընթացքում երկու անգամ Անդաստան է կատարվում Ս. Հարության տոնին, Համբարձման տոնին, Զատկի յոթերորդ կիրակի օրը (Երկրորդ Ծաղկազարդ), Հոգեգալստյան տոնին (Պենտեկոստե), Ս. Էջմիածնի տոնին, Վարդավառին, Ս. Աստվածածնի Վերափոխման տոնին և Խաչվերացին:

Անդաստանի ծեսն ունի մեր Եկեղեցու կողմից մշակված իր արարողակարգը, որին մասնակցում են տվյալ եկեղեցում ծառայող բոլոր եկեղեցական հոգևորականներն առանց բացառության, ըստ եկեղեցական աստիճանավորման:

Քանի որ այդ ծեսը կատարվում է եկեղեցական տոների ընթացքում, ապա ծիսական բոլոր իրերը (եկեղեցական ծեսերի ընթացքում կիրառվող բոլոր իրերը կոչվում են «զարդեր») և հանդերձները տոնական են: Անդաստանի ընթացքում կիրառվող զարդերն են. խաչվառը, ձեռաց խաչը, Ավետարանը, շուրջառը, բուրվառը, մոմակալը, քշոցը: Յուրաքանչյուր Անդաստանի ժամանակ թափորում կիրառվող խաչվառների պատկերները համապատասխան են տվյալ տոնին, ինչպես նաև սուրբգրային ընթերցումները կատարվում են հավուր պատշաճի: Օր. Զատկի Անդաստանին գործածական է Հարության պատկերով խաչվառը, իսկ Վերափոխումն Ս. Աստվածածնի տոնի դեպքում՝ Ս. Աստվածածնի պատկերով խաչվառը:

Ելնելով այն հանգամանքից, որ Անդաստանի կարգը կատարվում է հանդիսավորությամբ և մեծ շուքով, այսինքն հանդես է և տոնախմբություն, ապա արարողության ղեկավարը Հանդիսադիրն է՝ տվյալ եկեղեցու առաջնորդը կամ եպիսկոպոսը, կամ էլ տվյալ պահին ներկա ավագ հոգևորականը: Նա է ծեսի ընթացքում օրհնում աշխարհի չորս ծագերը (կողմերը), և թափորը շարժվում է իր ուղղորդությամբ: Երկրորդ կարևոր մասնակիցը տվյալ օրվա աղոթասացն է, ով շուշպայով (թաշկինակ) բռնում է Ավետարանը՝ հանդեսը շարժվում է իր ուղղությամբ: Անդաստանի թափորն ունի հետևալ կառուցվածքը. առջևից հաջորդաբար գնում են բուռվառակիրը, խաչվառակիրը, մոմակիրները, այնուհետև օրվա աղոթասաց հոգևորականը՝ Ս. Ավետարանը ձեռքին բարձր, ի տես ժողովրդի պահած: Խաչվառի ու Ավետարանի միջև սարկավագների բազմությունն է (եթե մայր եկեղեցի է և կան բավական թվով սարկավագներ), թափորը եզրափակում են քշոցակիրները:

Այսպիսով, Հայ Առաքելական Եկեղեցին Անդաստան կատարում է 15 տոների ընթացքում. բուն Անդաստանը միևնույնն է բոլոր տոների դեպքում, գործողությունների հերթականությունը չի փոխվում, փոխվում են միայն շարականներն ու սուրբգրային ընթերցվածքները: Սակայն նպատակահարմար գտանք նկարագրել Խաչվե-

[1] Տոնվում է Զատկի յոթերորդ շաբաթում, քառասուն օր անց, հինգշաբթի օրը, այսինքն Համբարձմանը հաջորդող կիրակի օրը (Համբարձման կիրակի, կամ Երկրորդ Ծաղկազարդ) նույնպես կատարվում է Անդաստանի ծեսը՝ հաջորդաբար հինգշաբթի և կիրակի օրերին:

ռացի երեկոյան արվող ծեսը, որն ունի որոշակի հավելումներ շարականների և ընթերցումների, ինչպես նաև թափորի շարժման ընթացքում:

Խաչվերացի տոնի երեկոյան Անդաստանի ծեսը սկսվում է եկեղեցու ատյանից: Աջ և ձախ ավանդատներից՝ դասերին համապատասխան, գալիս է թափորը: Ռեհանով և ծաղիկներով նախօրոք զարդարված սկուտեղը Ս. Խաչի երևացող նշանով բերվում և դրվում է ատյանի կենտրոնում՝ Ավագ խորանի առջև: Օրվան պատշաճ շարականի երգեցողությունից հետո ընթերցվում է. «Տէր Աստուած մեր, որ կարգեցեր յերկինս զդասս և զզինուորութիւնս հրեշտակաց... » աղոթքը, այնուհետև օրվան պատշաճ ընթերցումներ[1]:

Հետո Ավետարանով աղոթասացը, Խաչվառը բռնած սարկավագը և մնացյալ թափորը մնում են բեմի առաջ, իսկ Հանդիսադիրն ու մյուս քահանաները ձեռաց խաչերով շարժվում են դեպի արևմտյան կողմը[2], երգելով. «Սուրբ Աստուած (երեք անգամ), որ խաչեցար վասն մեր...»[3]: «Վասն Սրբազան Հայրապետին մերոյ» քարոզից հետո, եպիսկոպոսն արտասանում է. «Քառասուն Տէր ողորմեա», սարկավագները ձայնում են. «Օրհնեա Տէր», եպիսկոպոսն օրհնում է. «Օրհնեսցի և պահպանեսցի, և նախախնամեալ պահեսցի **Արեւելեան կողմն աշխարհիս և Հայրապետութիւն Հայոց** այս նշանաւ Սուրբ Խաչիւս և Սուրբ Աւետարանաւս, և աւուրս շնորհիւ, անուամբ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս, Ամէն»:

Հանդիսադիրի թափորը քայլում է դեպի արևելյան կողմը, իսկ աղոթասացի թափորը՝ արևմտյան կողմը[4]: Համապատասխան շարականից և ընթերցվածքներից հետո ասվում է «Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի...» քարոզը: Այնուհետև երկխոսության ձևով. Եպս. «Քառասուն Տէր ողորմեա», Սրկ. «Օրհնեա Տէր», Եպս. «Օրհնեսցի և պահպանեսցի, և նախախնամեալ պահեսցի **Արեւմտյան կողմն աշխարհիս և թագաւորութիւն Հայոց** այս նշանաւ Սուրբ Խաչիւս և Սուրբ Աւետարանաւս, և աւուրս շնորհիւ, անուամբ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս, Ամէն»:

Դրանից հետո Հանդիսադիրն ու իր հետ եղողները շարժվում են դեպի հյուսիսային կողմը, իսկ աղոթասացը՝ դեպի հարավային[5]: Համապատասխան շարականից և ընթերցումներից հետո ասվում է «Վասն երկրիս, անդաստանաց...» քարոզը, երկխոսությամբ՝ Եպս. «Քառասուն Տէր ողորմեա», Սրկ. «Օրհնեա Տէր», Եպս. «Օրհնեսցի և պահպանեսցի, և նախախնամեալ պահեսցի **Հարաւային կողմն աշխարհիս, երկիրս, անդաստանս, այգիս և պտղաբերութիւն տարւոյս** այս նշանաւ Սուրբ

---

[1] Ընթերցումներն են Սաղմոսներ, հատվածներ չորս Ավետարաններից, քարոզներ և աղոթքներ:

[2] Աշխարհի չորս կողմերը նշանակվում են Ավագ խորանին համապատասխան, այսինքն Ավագ խորանը՝ արևելք, Ավագ դուռը՝ արևմուտք, Ավագ խորանից աջ, ավազանի ուղղությամբ՝ հյուսիս, ձախ՝ հարավ:

[3] Նույնը, նաև համապատասխան շարականը, երգվում է ամեն կողմը շարժվելուց, և կատարվում են համապատասխան ընթերցումներ:

[4] Հանդիսադիրը օրհնում է աշխարհի չորս կողմերը, իսկ աղոթասացը՝ Ավետարանով այդ կողմերի ուղղությամբ շարժվողն է, այսինքն Հանդիսադիրն օրհնում է այն կողմը, ուր տվյալ պահին կանգնած է աղոթասացը (Ավետարանը):

[5] Եթե Հանդիսադիրը արևմուտքից արևելք, իսկ Աղոթասացը՝ արևելքից արևմուտք շարժվում են կիսաշրջանով, ապա Հանդիսադիրը արևելքից հյուսիս, իսկ Աղոթասացը՝ արևմուտքից հարավ շարժվում են շրջանի մեկ քառորդով:

Խաչիւս և Սուրբ Աւետարանաւս, և աւուրս շնորհիւ, անուամբ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս, Ամէն»:

Այնուհետև Հանդիսադիրը գնում է դեպի հարավային կողմը, իսկ աղոթասացը՝ հյուսիսային[1]: Համապատասխան շարականից և ընթերցվածքներից հետո հնչում է «Վասն վանորէից, անապատաց և ամենայն եկեղեցեաց մերոց...» քարոզը, երկխոսությամբ՝ Եպս. «Քառասուն Տէր Ողորմեա», Սրկ. «Օրհնեա Տէր», Եպս. «Օրհնեսցի և պահպանեսցի, և նախախնամեալ պահեսցի **Հիւսիսային կողմն աշխարհիս, վանքս, անապատս, քաղաքս և գիւղս և բնակեալ ժողովուրդս 'ի սմա**, այս նշանաւ Սուրբ Խաչիւս և Սուրբ Աւետարանաւս, և աւուրս շնորհիւ, անուամբ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս, Ամէն»: Ավարտին թափորը վերադառնում է իր նախկին դիրքին, այսինքն՝ Հանդիսադիրն ու իր թափորը վերադառնում են դեմքով դեպի արևելք, իսկ մյուսները խորանի առջև՝ դեմքով դեպի արևմուտք: Որից հետո եզրափակվում է արարողակարգի օրհնության հատվածը. «Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ»:

Անդաստանի ավարտին թափորը վերադառնում է ատյան, զարդարված Ս. Խաչը և Ավետարանը դնում են Խորանին և երգում են «Խաչի քո Քրիստոս» շարականը, որի ընթացքում եկեղեցականները համբուրում են Ս. Խաչն ու Ավետարանը: «Պահպանեա զմեզ, Քրիստոս Աստուած մեր, ընդ հովանեաւ սուրբ և պատուական խաչիւդ քով 'ի խաղաղութեան. փրկեա յերեւելի և յաներևոյթ թշնամւոյն: Արժանաւորեայ գոհութեամբ փառաւորել զՔեզ ընդ Հօր և ընդ Սրբոյ Հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս. Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. Ամէն» Տերունական աղոթքով ավարտվում է:

Եթե Եկեղեցին ունի Ավագ (արևմտյան) դռնից բացի նաև հարավային դուռ, ապա Աղոթասացի թափորը կարող է հարավային դռնից դուրս ելնել և կանգնել Ավագ դռան դիմաց՝ դրսից: Այդ դեպքում Անդաստանը կկատարվի ոչ թե եկեղեցու մեջ, այլ եկեղեցու շուրջը:

Թեև այսօր Անդաստանը հիմնականում կատարվում է եկեղեցիների ներսում, դրանց շուրջ կամ դրանց ծառաստաններում, սակայն մինչև խորհրդային կարգերը այն կարող էր կատարվել նաև գյուղի հանդերում և այգիներում:

Անդաստանը որպես շքերթ

Անդաստանի ծեսն իրականացվում է թափոր-հանդեսի միջոցով: Այստեղ մենք գործ ունենք շքերթի պաշտամունքային գործառույթի հետ: Շքերթը ներառում է որևէ կայացած փաստի օրինականացում, համընդհանուր ճանաչում, միշտ կապված է մարդկային տվյալ խմբից անդին որևէ գաղափարի հետ, հանուն որի կատարվում է շքերթը և որն էլ «շուք» (նախնական իմաստով՝ «ստվեր», «հովանի», ոգեղեն, վերմարդկային էություն) է հաղորդում երթին: Շքերթը quest-ի արքետիպի մարմնավորումն է, որի էություններից մեկը կյանքի գրգիռի, «դժվարհասանելի գանձի» որո-

[1] Այստեղ կրկին Հանդիսադիրը հյուսիսից հարավ, իսկ Աղոթասացը հարավից հյուսիս շարժվում են կիսաշրջանով:

նումն է[1]: Շքերթից, նյութական աշխարհից անդին գտնվող «շուքը» հենց այդ դժվարհասանելի ու որոնվող խորհրդավոր էությունն է: Անդաստանի դեպքում այդ «շուքը» Հիսուս Քրիստոսն է, իսկ գաղափարը՝ Ավետարանի ուժով աշխարհի չորս ծագերի պահպանությունը: Շքերթի առկայությունը ենթադրում է ցանկացած երևույթի կամ գաղափարի *սակրալիզացիա* (սրբագործում), քանի որ շքերթն ինքնին սրբազան է:

Շքերթի առանցքային բովանդակությունը մեծ թվով մարդկանց, հանրության բոլոր անդամներին մեկ գաղափարի (ընդհանուր շահի) շուրջ միավորելն է, իսկ դրա շարժական-դինամիկ բնույթը ենթադրում է խորհրդանշական անցում մեկ կետից դեպի մյուսը, ուստի շքերթը հանրության տեղափոխություն է երկու նշված կետերի միջև, որի ընթացքում հանրությունը միավորվում է միևնույն գործողությունների շուրջ և հանդես է գալիս իբրև մեկ կոլեկտիվային անհատ: Թեև աշխարհականները անմիջական մասնակցություն չեն ցուցաբերում Անդաստանի ծեսին, միևնույն է, նրանք եկեղեցականների հետ ամբողջություն են կազմում, քանի որ օրհնվում է ամբողջ երկիրը և բնակչությունը: Իսկ տեղափոխության կետերն են աշխարհի չորս կողմերը՝ ամեն կողմին ուղղված համապատասխան օրհնությամբ:

Առհասարակ շքերթի ժամանակացույցը և առիթը կապված են ինչպես գործառույթի, այնպես էլ հասարակության բնույթի հետ: Այս տեսակետից շքերթները կարելի է բաժանել *պարբերական* և *դիպվածային* տեսակների: Պարբերական շքերթները կապվում են տոմարական որոշակի ժամկետներին ամրագրված տոների և ուխտերի հետ, որոնք առավել բնորոշ են ավանդական հասարակություններին: Քանի որ Անդաստանը նույնպես կատարվում է տոմարական հստակ ժամկետներին, ապա այն դասվում է պարբերական շքերթների շարքին:

Ելնելով շքերթի բուն բովանդակությունից՝ կարելի է ասել, որ այն պետք է ներկայացնի կոլեկտիվ անհատին, այսինքն շքերթի գործառույթներից կարևորագույն է միասնականության ապահովումը: Սովորաբար ավանդական հասարակության, համայնքի մեջ այդ միասնականությունը կամավոր է, այսինքն պարբերաբար և որոշակի առիթներով շքերթ կատարելը բխում է ինչպես հանրության, այնպես էլ յուրաքանչյուր անհատի շահերից և հանդիսանում է ներքին պահանջ:

Շքերթի մյուս կարևոր գործառույթներից է տարածական **սահմանագծումը**, որի մասնավոր դրսևորումներից է **շրջանի ամփոփումը**: Այս գործառույթն իր կայուն պարբերականությամբ կապված է տիեզերքի վերահաստատման գաղափարի հետ, որտեղ պարբերականությունն արտահայտվում է շրջանի խորհրդանշանով: Երթը որպես տեղափոխություն մեկ նշանագրված օբյեկտից (օրինակ, բնակավայրից կամ հավաքատեղիից) դեպի մյուսը՝ ծիսականապես հատուկ կարևորված կետը (օրինակ, տաճարը, սրբավայրը կամ կառավարության շենքը) ուրվագծում է տվյալ շքերթին վերաբերող ծիսական տարածքը: Անդաստանի դեպքում երթը շրջանագծում է եկեղեցու ներսը, եկեղեցու շուրջը, այգին կամ հանդը, որոնք խորհրդաբանորեն ներկայացնում են տիեզերքը կամ աշխարհը:

Շրջանաձև տեղաշարժը կապված է տիեզերական ռիթմի հետ: Հետևաբար, ոչ միայն ամբողջական շրջանագծումը, այլև մասնակիցների գործողությունները պետք

[1] “Quest nach dem verlorenen Lebensreiz, der “schwer erreichbaren Kostbarkeit”…”. C. G. Jung, Grundwerk C. G. Jung, B.2, Olte und Freiburg, Walter, 1990, S. 227. (գերմաներենից թարգմանությունը պատկանում է ազգագրագետ L. Սիմոնյանին):

է ունենան որոշակի հավասարաչափ ընթացք: Որոշ դեպքերում այդ ընթացքն ապահովագրում է երգն ու պարը, մյուս դեպքերում՝ խոսք-բանաձևի խմբովի արտասանությունը կամ համատեղ քայլքը: Անդաստանի դեպքում մենք ունենք երգի, խոսք-բանաձևի և համատեղ քայլքի ամբողջություն[1]:

Ինչպես գրում է Օ. Ֆրեյդենբերգը անտիկ աշխարհի ծիսական երթերի մասին. «Գործողությունը և ռիթմը որպես մարդկային հասարակության գիտակցության պարզագույն կենսաբանական տարրեր անմիջապես ենթարկվում են մեկնաբանության՝ վերածվելով զուգահեռ աշխարհայացքային ձևերի … այդպիսի ռիթմիկ-կինետիկ արարողությունների հնագույն ձևն է քայլելու գործողությունը. ոտքը, քայլքը, քայլելով շարժվելը, որոնք իմաստավորվելով շքերթի մեջ որպես արևի շարժում հողի տակ և երկնքով (լույսի անհետացում-հայտնություն), նույնացվում են ռիթմի հետ: Այստեղից՝ շրջանով երթերը, շրջանաձև պարերը, ինքը՝ շրջանը ի հայտ են գալիս հարթության մեջ, որպես տարածության սահմանափակ հատվածներ, բաղկացած իրար հավասար երեք մասերից, որտեղ առաջընթաց շարժումը հավասար է հետընթաց շարժմանը և կանգառին»[2]:

Ինչպես ասվեց վերևում, Անդաստանի ժամանակ Հանդիսադիրն ու Աղոթասացը շարժվում են շրջանաձև, սակայն ոչ թե միանգամից, այլ կիսաշրջաններով և քառորդ շրջաններով: Եթե Հանդիսադիրը արևմուտքից արևելք, իսկ Աղոթասացը՝ արևելքից արևմուտք (որոշ եկեղեցական սովորույթներում աղոթասաց եկեղեցականն Ավետարանով կանգնում է Հանդիսադրի կողքին, մինչև վերջին աղոթքը) շարժվում են կիսաշրջանով, ապա Հանդիսադիրը արևելքից հյուսիս, իսկ Աղոթասացը՝ արևմուտքից հարավ շարժվում են շրջանի մեկ քառորդով: Ապա Հանդիսադիրը կրկին հյուսիսից հարավ, իսկ Աղոթասացը հարավից հյուսիս շարժվում են կիսաշրջանով՝ ամփոփելով շրջանը: Անցնելով կիսաշրջանը՝ կանգ են առնում, կատարվում է օրհնություն, որից հետո հակառակ՝ հետընթացով մեկ քառորդ շրջան, նորից կանգնում են, կատարվում է օրհնություն, կրկին անգամ կիսաշրջան առաջընթաց, կանգնում են, կատարվում է օրհնություն: Հետևաբար, Հանդիսադիրը առանձին շրջան է ամփոփում, Աղոթասացը՝ առանձին՝ միահյուսված մեկը մյուսին: Սակայն գործ ունենք ոչ միայն շրջանագծման, այլև շրջանի մեջ խաչի ուրվագծման հետ: Արևմուտք-արևելք ուղղությունը խաչի ուղղահայաց գիծն է, իսկ այն պահին, երբ Հանդիսադիրն ու Աղոթասացը շարժվում են մեկ քառորդ շրջանով ու կրկին անգամ կիսաշրջան են անում հյուսիս-հարավ ուղղությամբ՝ գծվում է խաչի հորիզոնական գիծը: Իսկ աշխարհի չորս ծագերը հենց խաչի չորս ծայրակետերն են: Կարող ենք փաստել, որ միաժամանակ առկա են հորիզոնական և ուղղահայաց պրոյեկցիաներ:

Որպես կանոն, շքերթն ունենում է օժանդակ տարրեր, որոնք մի կողմից ուժգնացնում են նրա հանդիսավորությունը, մյուս կողմից՝ նշանագրում են (mark) երևույթը որպես շքերթ: Դրանք են.

ա. լռությունը կամ երաժշտությունը,

բ. հատուկ առարկաները,

---

[1] Գ. Հակոբյանը, գրելով Անդաստանի մասին, մշտապես այն պար է անվանում, թեև այնքան էլ հասկանալի չէ, թե պար ասելով նա ինչ նկատի ունի: Տես. Գ. Հակոբյան, Հայրենի եզերք, Եր., 1978, էջ 17:

[2] О. Фрейденберг, Поэтика сюжета и жанра, М., 1997, с. 112-113:

գ. մարմնակինետիկան,

դ. երթուղին,

ե. զգեստավորում — զարդարումը:

Ինչպես լռությունը, այնպես էլ երաժշտությունը, այդ թվում՝ շխկշխկան (Անդաստանի դեպքում՝ քշոցի ձայնը), հարվածային կամ փողային նվագարաններով անորոշ ձայնարտաբերումը, քայլերգը, ծիսական օրհներգը խորհրդանշական իմաստով տարբերվում են հասարակ զրույցից, երկխոսությունից՝ նշանագրելով ծիսական հատուկ իրադրություն: Ընդ որում լռությունը որպես օրենք խորհրդանշում է մահը, խոսքը՝ կյանքը, իսկ բուն երաժշտությունը՝ ժամանակից դուրս հայտնվող ծիսական իրականությունը: Սա նշանակում է, որ յուրաքանչյուր շքերթ իր ռիթմիկ երգով ու գործիքային երաժշտությամբ գտնվում է ժամանակից դուրս, ներկայացնում է անսովոր պարագաներ, գտնվում է ժամանակի առասպելական ընկալման համակարգում[1]: Սովորաբար, երաժշտության բովանդակությունը փոխանցում է շքերթի նպատակն ու իմաստը: Անդաստանը, լինելով կրոնական շքերթ, ուղեկցվում է երգվող շարականներով և աղոթքներով, սաղմոսներով, հատուկ ընթերցվածքներով, նաև քշոցներով. այդ բոլորը մատնանշում են Անդաստանը որպես հատուկ, ժամանակից անդին ծիսական իրականություն:

Ոչ պակաս կարևոր են շքերթի ընթացքում կիրառվող առարկաները: Ծիսական շքերթում դրանք կազմում են արարողության կորիզը և ապահովում են խորհրդանշական հագեցվածությունը: Ուխտավայր տարվող նվերները և զոհերը, սրբությունների նշխարները, պատկերները, սրբազան գրքերը, կրոնական զանազան խորհրդանիշները – այս ամենը կրկնապատկում է սրբության անտես ներկայությունը: Անդաստանի մեջ այս դերում հանդես են գալիս Ավետարանը, ձեռաց խաչերը, խաչվառը և այլն:

Վերջապես, շքերթը սովորական իրականությունից անջատում է նաև մասնակիցների հանդերձանքը: Սովորաբար ուխտերի ու տոնական շքերթների համար ավանդական մշակույթում կամ հատուկ զգեստներ են պահել, կամ նորն են կարել և կամ հագել են լավագույն զգեստը: Անդաստանի պարագայում եկեղեցականները կիրառում են եկեղեցական բոլոր զարդերն ու տոնական եկեղեցական զգեստները:

Շքերթի բուն նպատակին հասնելուց հետո, երբ տիեզերակարգը վերականգնված կամ հաստատված է, նրանից ստացած լիցքը, խորհրդանշաններն ու նշանները տեղափոխվում են կենցաղ և աշխարհիկացվում են՝ ավելի ամրապնդելով համայնքը: Օրինակ Ծաղկազարդի Անդաստանի ծեսի ընթացքում օրհնված ուռենու ճյուղերը խաղողօրհնեքի Անդաստանի ծեսի օրհնված խաղողը, կամ մեր նկարագրած Խաչվերացի Անդաստանից հետո Ս. Խաչի զարդարանք հանդիսացող ռեհանն ու ծաղիկները ժողովուրդը տուն է տանում:

[1] М. Элиаде, Миф о вечном возвращении, СПб, 1998, с. 53. Միևնույն ժամանակ տարածական տեղափոխությունը (շքերթի առաջին բաժինը) տեղի է ունենում դեպի սրբազան օբյեկտ, որը յուրաքանչյուր դեպքում ունի կենտրոնի խորհրդապաշտությունը. նույն տեղում, էջ 21-23:

Տաճարը և Անդաստանը որպես տիեզերքի մոդել

Աշխարհի տարածական մոդելն արտահայտվում է մի շարք գաղափարներով ու կերպարներով. տիեզերական սյուն, ծառ, լեռ – հայտնի թե՛ արխայիկ, թե՛ ավելի զարգացած մշակույթներում՝ պալատ, տաճար և այլն: Տիեզերական ծառը, սյունը, լեռը կարող են լրացնել, կրկնապատկել կամ փոխարինել միմյանց[1]: Աշխարհի մոդելը կարող է լինել ուղղահայաց կամ հորիզոնական, ինչպես և այդ երկուսի միացումով՝ եռաչափ-ամբողջական, օր.՝ քրիստոնեական տիեզերակառույցը:

Աշխարհի **ուղղահայաց** մոդելը արտահայտվում է վերից վար կամ վարից վեր՝ աշխարհի առանցքով: Այսպիսով աշխարհը բաժանվում է երեք մակարդակների – երկինք, երկիր և ստորերկրյայք, ընդ որում միշտ չէ, որ այդ մասերը իրար հավասար են[2]:

Աշխարհի **հորիզոնական** մոդելը արտահայտվում է առանցքի հանդեպ չորս ուղղություններով, որոնք համապատասխանում են աշխարհի չորս կողմերին, և որոնց միջև եղած անկյունները հավասար են իրար[3]: Ավելի բարդանալով աշխարհի ուղղահայաց և հորիզոնական երկու ավանդական մոդելները միանում են, առաջանում է աշխարհի **միասնական** մոդել – ստացվում է յոթ կետ:

Քրիստոնեության տարածումով սկիզբ է դրվում նոր աշխարհին, որը պետք է ունենար աշխարհընկալման սեփական տիեզերական մոդել՝ կանոնակարգվելով աշխարհի առանցքի շուրջ: Այդ առանցքը Հիսուս Քրիստոսն է, իսկ Խաչը՝ տիեզերական (Կենաց) ծառը[4]: Քրիստոնեության մեջ խաչն ու խաչելությունը հոմանիշներ են, ուստի խաչը խորհրդանշում է Քրիստոսին, Ում շուրջ համախմբվում է աշխարհը և Ով ստեղծում է նոր կարգուկանոն: Քրիստոսին են ենթարկվում Տիեզերքի բոլոր երեք ոլորտները. «Եւ ամենայն արարածք որ են յերկինս և յերկրի (տողատակ՝ բազումք՝ և ի ներքոյ երկրի, այսինքն բազում ավետարաններում ոլորտները չորսն են) և ի ծովու և որ ի նոսա՝ լուալ զի ասէին, Որ նստի յաթոռն և Գառնն՝ օրհնեալ, բարձրացեալ և փառաւորեալ յաւիտեանս յաւիտենից: Եւ չորք կենդանիքն ասէին, Ամէն. և երիցունքն անկանէին առաջի նորա և երկիր պագանեին» (Յայտն. Ե., 13-14):

Այդ նույն գաղափարն արտահայտում է նաև տաճարը որպես շինություն և հավաքատեղի:

Քրիստոնեական տաճարի կենտրոնը[5] զոհասեղանն է, որն էլ հանդիսանում է ուղղահայաց առանցքի կենտրոնը[6]: Համաձայն Ի. Իբրահիմովի, տաճարի խորհրդանշական կենտրոնով՝ զոհասեղանով է անցնում աշխարհի առանցքը:

---

[1] Տես. М. Элиаде, Космос и история, М., 1987, с. 150, Б. Фролов, Начала первобытной символики (по материалам изучения древнейших культур Армении и сопредельных территорий)//Պատմաբանասիրական հանդես, Եր., 1984, թիվ 1, էջ 61, Ա. Մնացականյան, Հայկական զարդարվեստ, Եր., 1955, էջ 611 և այլն:

[2] Նույն տեղում, էջ 145:

[3] Տես. Б. Фролов, նշվ. աշխ., էջ 58:

[4] Տես. К. Г. Юнг, Либидо, его метаморфозы и символы, СПб., 1994, с. 246-247, В. Евсюков, Мифы о мироздании, М., 1986, с. 30, Л. Абрамян, Христос как змееборец: церковная традиция и память художника//Мифологические представления в народном творчестве, М., 1993, с. 174 և այլն:

[5] Կենտրոն ասելով նկատի է առնվում խորհրդաբանական առումը, այլ ոչ թե կոնկրետ տարածական կենտրոն լինելը:

[6] Տես. Н. Л. Павлов, Алтарь. Ступа. Храм: архаическое мироздание в архитектуре индоевропейцев, М., 2001,21, 25, Л. Абрамян, նշվ. աշխ., էջ 172:

Այստեղ համընկնում են տիեզերքի մակրոկոսմոսն ու մարդու միկրոկոսմոսը[1]: Տաճարն ուղղահայաց բաժանվում է երկու մասերի, որոնք հավասարազոր են երկնքին ու երկրին: Այդ մասերը կարող են բարդացվել մանրամասներով. երկնայինից երկինք տանող աստիճաններ, հիմքը որպես ստորերկյայքի մաս և այլն: Գմբեթը հավասարազոր է երկնքին[2]: Ըստ հեղինակի, քրիստոնյա տաճարի հիմնական միտումն է լինել երկրի ու երկնքի հանդիպման վայր, այսինքն անցումային ճանապարհ մարդկայինից դեպի աստվածայինը[3]:

Տաճարը կառուցվում է ըստ երկնային, աստվածային մոդելի: «Դու ասացիր, որ ես տաճար շինեմ քո սուրբ լերան վրայ եւ զոհասեղան՝ քո բնակութեան քաղաքում, քո այն սուրբ խորանի նմանութեամբ, որ սկզբից եւեթ, նախապէս, ինքդ պատրաստեցիր» (Իմաստութիւն Սողոմոնի, Թ. 8): Հիսուս ասում է Պետրոսին, որ էր Սիմոն. «Եւ ես քեզ ասեմ, զի Դու ես վէմ, և ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ, և դրունք դժոխոց զնա մի՛ յաղթահարեսցեն: Եւ տաց քեզ զփականս արքայութեան երկնից. և զոր միանգամ կապեսցես յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս, և զոր արձակեսցես յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս» (Մատթ. ԺԶ., 18-19): Այսինքն Պետրոսը Եկեղեցու հիմքն է, վեմ-քարը, որ դրվում է դժոխքի վրա և փականն ու կապն է երկնքի ու երկրի:

Եկեղեցու էական պայմաններից է հիմնովին օծված լինելը: Եկեղեցաշինության մեջ 16 օծված հիմնաքարերից 12-ը առաքյալների անունով է և 4-ը՝ ավետարանիչների, բայց առաքյալներից երկուսը՝ Հովհաննեսն ու Մատթեոսը նաև ավետարանիչներ են, ուստի Պողոս առաքյալն ու Գրիգոր Լուսավորիչը դիտվում են որպես 15-րդ և 16-րդ առաքյալներ[4]: 16 սյուներից 4-ը եկեղեցու 4 անկյուններն են՝ այդ անկյան քարերի մեջտեղում, 3-ը եկեղեցու երկայնքով և 2-ը լայնքով են զետեղվում, իսկ 2-ն էլ աջակողմյան անկյուններում: Խորանի անկյուններում էլ դրվում են մնացած 4 սյուները[5]:

Հայկական եկեղեցիները համապատասխանեցված են աշխարհի մոդելի չորս կողմերին: Գլխավոր դուռը, որ գտնվում է արևմուտքում, կոչվում է Ավագ դուռ: Եկեղեցին ուղղված է արևմուտքից արևելք, ուր և գտնվում է Ավագ խորանն ու բեմը: Սակայն եկեղեցու ներսում ուղղվածությունը արևելքից արևմուտք է, քանի որ երեսով դեպի ժողովուրդը դարձած սեղանը դիտվում է որպես անձ, և նրա աջ ու ձախ կողմերով որոշվում են աշխարհի կողմերը: Համապատասխանաբար, հյուսիսը Ավագ խորանի աջ կողմում է, հարավը՝ ձախ[6]: Ստացվում է յուրահատուկ շրջան՝ արտաքինի և ներքինի համադրությամբ: Եկեղեցու արևելյան կողմում գտնվում է բեմը, որի վրա Սուրբ Խորանն է իր Սուրբ Սեղանով, բեմը երկու կողմից ունի 3-7 ոտք աստիճաններ[7] (անշուշտ, կան նաև բացառություններ, երբ աստիճանները գտնվում են Խորանի կենտրոնում, օր. Ծաղկաձորի Կեչառիսի եկեղեցին): Աստիճանները երբեմն

---

[1] Տես. Ибрагимов И. Пространственно-ценностная ориентация и визуальная динамика храмового зодчества в христианстве и исламе (Автореферат диссертации на соискание ученой степени кандитата искусствоведения), Саратов, 2011, с. 14.

[2] Հայկական նյութում՝ օր. Ա. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 418, ուր հեղինակը մեջբերում է քառատող, որ փորագրված է Ղրիմի Սուրբ Խաչ եկեղեցու գմբեթին, ուր գմբեթը պատկերն է վերին երկնքի:

[3] Ибрагимов И., նշվ. աշխ., էջ 15:

[4] Տես. Մ. արք. Օրմանյան, Ծիսական բառարան, Եր., 1992, էջ 73:

[5] Նույն տեղում, էջ 95: Մանրամասն նկարագրվում է սյուների դիրքն ու համապատասխան առաքյալի անունը:

[6] Նույն տեղում, էջ 51:

[7] Նույն տեղում, էջ 59:

արևմուտք-արևելք, երբեմն հարավ-հյուսիս կամ հյուսիս-հարավ են ուղղված, կամ դինամիկ տեսանկյունից՝ պտույտով միաժամանակ երկու ուղղություն են կազմում[1]: Հայկական շատ եկեղեցիներ կենտրոնում չորս սյուների վրա գմբեթ ունեն: Հին եկեղեցիներում այդ տեսակ գմբեթը կոչվում է կաթողիկե և խորհրդանշում է երկինքը[2]:

Ինչպես նշվեց, տիեզերակառույցի առանցքն անցնում է Սուրբ Սեղանով: Սեղանը տափարակ, խաչաձև քարե շինվածք է՝ խորանի մեջտեղում կանգնած քարե սյան վրա և օծված է 12 տեղով: Գլխավոր օծումը մեջտեղում է, որ կոչվում է «սեղանի գագաթ» և 7 աստիճաններով օրհնված է[3]: Խորանը սեղանի հետևի մասն է, որը կամարով վրայից փակված, վրանաձև տեղ է՝ պարփակված չորս սյուներով, որոնք ավետարանիչներին են նվիրված[4]: Ստացվում է, որ բեմը, խորանն ու սեղանը ևս ընկալվում են որպես տիեզերքի մոդել՝ ուղղաձիգ և հորիզոնական յոթ կոորդինատներով:

Շատ հետաքրքրական է, որ ժողովրդական բանահյուսության մեջ ևս արտահայտվել է աշխարհի չորս կողմերի հանդեպ եկեղեցու ներքին ուղղվածությունն ու խորհրդաբանությունը: «Որ որովհետև մեզ մոտ երկրում, երբ արևը մայրն է մտնում, հոն, երկնքում, արևածագ է, հետևաբար, Աստված, բազմած ոսկե գահին, դիմավորում է արևածագը: Այդ դիրքում աջակողմը գտնվում է հյուսիսային, ձախակողմը՝ հարավային, ճակատը ընկնում է՝ երկնքում թեև արևածագին, բայց երկրում արևմուտում, իսկ թիկունքը՝ երկրի դիտումով՝ արևելեն»[5]: Ակնհայտ է, որ ժողովրդական բանահյուսության մեջ ևս Աստծո հավիտենական գահը երկնքում գտնվում է նույն տարածաչափական դիրքում, ինչպես Ավագ խորանը եկեղեցում, և ինչպես եկեղեցում բեմի, այնպես էլ երկնքում Աստծո գահի համեմատ, դիտարկվում են աշխարհի չորս կողմերը:

Հայկական «Ահեղ դատաստան» և «Ամենակալ» մանրանկարներում Քրիստոս պատկերվում է շրջապատված խաչաձև (X-ձև) դասավորված չորս ավետարանիչների խորհրդանշաններով. Մարկոս-առյուծ, Մատթեոս-հրեշտակ (մարդ), Ղուկաս-ցուլ և Հովհաննես-արծիվ: Հիմնականում օգտագործվում է խորհրդանշանների դասավորությունն ըստ Եզեկիելի տեսիլքի (Եզեկ. Ա., 10, աջ կողմում մարդ, առյուծ, ձախ կողմում՝ եզ, արծիվ), շատ ավելի հազվադեպ՝ համաձայն Հովհաննու Հայտնության (Յայտն. Դ., 7-8, առյուծ, եզ, արծիվ, մարդ)[6]: Մանրանկարներում ավետարանիչների խորհրդանշանները դասավորված են (դիմացից). աջ կողմում արծիվն ու ցուլը, ձախ կողմում՝ հրեշտակն ու առյուծը[7], իսկ եթե դիտարկենք նկարը «ներսից», այսինքն

---

[1] Նույն տեղում, էջ 50-51:
[2] Նույն տեղում, էջ 67:
[3] Նույն տեղում, էջ 116:
[4] Նույն տեղում, էջ 88:
[5] Գ. Հալաջյան, Դերսիմի ազգագրական նյութեր, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ, թղթ. 59, մաս. XIV, թղթ. 5դ., էջ 1473-1474: Հալաջյանը բերում է նաև այդ մասին ժողովրդական բանաստեղծություն.

Աշխարհը բաժանվում է չորս կողմերի,
Աջակողմը հյուսիսային կողմն է աշխարհի,
Ձախակողմը հարավային կողմն է աշխարհի,
Հարավելս, կամ արևածեգ, արևելյան կողմն է աշխարհի,
Արևմուտս կամ մայրամուտ՝ արևմտյան կողմն աշխարհի:

[6] Գ. Յովսեփեան, Ոսկերչական արուեստի մի նմուշ ԺԳ դարում, «Գեղարուեստ», 4, Թիֆլիս, 1911, էջ 41:
[7] Օր. Ծաղկող Աստվածատուր, Պատվիրատուններն Ամենակալի առջև, Ավետարան, 1417 թ., Ակռ, մատենադարան, ձեռ. թիվ 4841, նկ. 51, ծաղկող Վարդան Բաղիշեցի, Վերջին դատաստան, Ավետարան, 1571 թ., Բաղեշ, Մատենադարան, ձեռ. թիվ 4845, նկ. 85, ծաղկող Մարտիրոս և որդի

մեջտեղում նստած Քրիստոսի համեմատ դիտված կողմերով, ապա կստացվի դասավորությունն ըստ Եզեկիելի:

Ինչպես ասացինք, Ավագ Խորանի չորս սյուները նվիրված են չորս ավետարանիչներին: Երկուսը հետևի, այսինքն արևելյան պատի մեջ. Հովհաննեսը՝ հյուսիսային, Մատթեոսը՝ հարավային կողմում: Մյուս երկուսը խորանի «բերանում». Ղուկասը՝ հյուսիսակողմում, Մարկոսը՝ հարավակողմում[1]: Թեև եկեղեցու ներսում կողմերը դիտվում են ըստ զոհասեղանի, սակայն աշխարհի կողմերը չեն կարող փոխվել, փոխվում են միայն աջն ու ձախը: Համապատասխանաբար՝ դիմացից, այսինքն արևմուտքից հյուսիսը կլինի ձախ, իսկ հարավն՝ աջ, իսկ զոհասեղանից՝ այսինքն արևելքից, հյուսիսը կլինի աջ, իսկ հարավը՝ ձախ: Եթե խորանի չորս սյուները, որոնք համապատասխանաբար խորհրդանշում են չորս ավետարանիչներին, փոխարինենք նրանց կենդանի-խորհրդանշաններով, ապա կստանանք խորանի ետևում Հովհաննես-արծիվ՝ հյուսիսում, և Մատթեոս-հրեշտակ՝ հարավում, Ղուկաս-եզ՝ հյուսիսում, և Մարկոս-առյուծ՝ հարավում կամ ըստ զահասեղանի՝ աջ կողմում Հովհաննես-արծիվ և Ղուկաս-եզ, ձախ կողմում՝ Մատթեոս-հրեշտակ և Մարկոս-առյուծ: Եթե այս դասավորությունը համեմատենք մանրանկարների հետ և համապատասխան աջն ու ձախը փոխենք տեղերով, ապա կստանանք մանրանկարների խաչաձև (X-ձև) դասավորություն Հիսուսի կողմերով՝ ձախ կողմում արծիվն ու եզը (Հովհաննեսն ու Ղուկասը), իսկ աջ կողմում՝ մարդն ու առյուծը (Մատթեոսն ու Մարկոսը): Քանի որ աշխարհի չորս կողմերը տրված են հորիզոնական, ապա Ավագ Խորանի ետևի երկու սյուները արևելքն ու հյուսիսն են, իսկ դիմացի երկու սյուները՝ արևմուտքն ու հարավը: X-ձևը հատվելով՝ արևելքը նշանակվում է Հովհաննես-արծիվով, արևմուտքը՝ Ղուկաս-եզով, հյուսիսը՝ Մատթեոս-հրեշտակով, և հարավը՝ Մարկոս-առյուծով:

Եթե Ավագ Խորանի զոհասեղանն ու խաչը Քրիստոսն է, իսկ քրիստոնեական տաճարի առանցքը անցնում է զոհասեղանով, ապա Քրիստոս տիեզերքի ուղղահայաց առանցքն է[2], իսկ չորս ավետարանիչները տիեզերքի չորս կողմ-սյուներն են, տրված հորիզոնական կտրվածքով, և իրենց ներսում ամփոփում են ամբողջ տիեզերքը: Այսպիսով, Քրիստոս ուղղահայաց կանգնեցված հավասարաթև խաչն է, իսկ չորս ավետարանիչները X-ձևի խաչ են կազմում նրա շուրջը՝ հորիզոնական, այսինքն ստացվում է սեռականաձև, այսպես կոչված «հայկական» խաչ:

Հետաքրքիր է, որ ժողովրդի մեջ նույնպես արտահայտվել է տիեզերակառույցի այս գաղափարը: Այսպես, Վանի գյուղերում փեսայի համար պատրաստում էին խաչաձև պսակ-ուրցը, երկու փայտիկներ իրար միացրած և կենտրոնում բամբակ (սպի-

---

Գրիգորիս, Վերջին դատաստան, Ավետարան, 1604 թ., Խիզան, Մատենադարան, ձեռ. թիվ 6093, նկ. 87, Հայկական մանրանկարչություն. Վասպուրական, Եր., 1978: Ծաղկող Հակոբ Ջուղայեցի, Ահեղ դատաստան, Ավետարան, 1610թ., Մատենադարան, ձեռ. թիվ 7639, նկ. 63, И. Дрампян, Акоп Джугаеци, Ер., 2008: Մեկ այլ մանրանկարում Հակոբ Ջուղայեցին ավետարանիչների կենդանի-խորհրդանշաններին դասավորել է Հովհաննու Հայտնության մեջ տրվածի համաձայն. շրջանի մեջտեղում Քրիստոսն է, որի շուրջ, վերևից, աջ ուղղությամբ առյուծը, եզը, արծիվ ու հրեշտակը (И. Дрампян, նշվ. աշխ., նկ. 15): Եթե կերպարներն իրար միացնենք գծերով, կստանանք հավասարաթև խաչ:

[1] Մ. արք. Օրմանյան, նշվ. աշխ., էջ 95:

[2] Քրիստոս Աստված՝ երկնային (վերին) ոլորտ, Քրիստոս մարդեղացած՝ երկրային (միջին) ոլորտ, Քրիստոս հարյալ, դժոխքի կործանիչ՝ ստորերկյայքի (ստորին) ոլորտ:

տակ) դրած, իսկ վրան և չորս թևերին կանաչ ու կարմիր բրդյա կտորներ: Այդ պսակը երգով գովելիս, այսպիսի գովք էին ասում.

«Չորս պսակ չորս կենդանակերպն է,
Գլխու պսակ խաչափայտն է,
Այս թագին ի՞նչ կու պէտէր որ թագին շուռ գար,
Սուրբ Աղօթարան զայս թագ օրհնէր որ թագին (շուռ գար)»[1]:

Իրականում Խաչի թևերը պսակող կամ Քրիստոսի շուրջ պատկերվող չորս ավետարանիչների խորհրդանիշ-կերպարները քրիստոնեության կողմից որդեգրած հնագույն առաջավորարևելյան մի ավանդույթ են: Այսպես, Թոփրակ-կալեում հայտնաբերվել են արձանիկներ, որոնք հորինված են առյուծի, արծվի, ցլի և մարդու մարմնի մասերի համակցությամբ և զարդարել ու պահպանել են գահի չորս կողմը[2], այսինքն տիեզերքի առանցքն անցել է գահով, իսկ թագավորը կամ գերագույն աստվածը (Խալդին) ընկալվել են նաև որպես տիեզերքի պահապան: Նման ավանդույթ կար և չինական աշխարհակառույցի մեջ: Աշխարհի կողմերի պահապան ոգիները նկարվում կամ քանդակվում են անկյուններում, վերևում. աջից՝ Կանաչ վիշապ-արևելք, ձախից՝ Սպիտակ վագր-արևմուտք, ներքևում աջից՝ Կարմիր թռչուն-հարավ և ձախից՝ Սև զինվոր-հյուսիս, որը պատկերվում է որպես կրիային փաթաթված օձ, խորհրդանշում է Երկնքի և Երկրի ամուսնությունը, իսկ տիեզերքի առանցքը տիեզերական ծառն է[3]:

Հատկանշական է, որ Հայ Առաքելական Եկեղեցին Ս. Հարության տոնին առավոտյան Անդաստանից առաջ կատարում է աշխարհի չորս կողմերի առանձին օրհնություն: Երգվում են պատշաճ շարականներ և ընթերցվում ավետարաններին համապատասխան հատվածներ՝ ուղղված աշխարհի տվյալ կողմին: Դեպի արևելք՝ Շրկ. «Ընդ լուսանալ», Ավետ. ըստ Հովհ. ԺԹ, 38-42, դեպի արևմուտք՝ Շրկ. «Առաքեցար ի Հօրէ», Ավետ. ըստ Ղուկ. ԻԳ., 50-56, դեպի հարավ՝ Շրկ. «Ի գերեզման Քո», Ավետ. ըստ Մարկ. ԺԵ., 42-47, դեպի հյուսիս՝ Շրկ. «Քո յարութեանդ», Ավետ. ըստ Մատթ. ԻԷ., 57-66: Ավետարանների բոլոր չորս հատվածներն էլ պարունակում են միևնույն դրվագը՝ Քրիստոսի իջեցումը խաչից և ամփոփումը անձավում: Հետաքրքիր է, որ այս դեպքում աշխարհի կողմերն օրհնվում են չորս Ավետարանների հակառակ դասավորությամբ. Ավետարան ըստ Հովհաննու, ըստ Ղուկասի, ըստ Մարկոսի և ըստ Մատթեոսի, մինչդեռ ավետարանիչները դասավորված են նույնպես համաձայն Եզեկիելի տեսիլքի՝ Մատթեոս, Մարկոս, Ղուկաս և Հովհաննես:

Պետք է նշել, որ աշխարհի կողմերը խորհրդանշող ավետարանիչները դասավորված են հորիզոնական երկու զուգահեռ գծով, և անցումը կատարվում է ոչ թե շրջանաձև՝ ժամացույցի սլաքին համապատասխան՝ արևելք, հարավ, արևմուտք և հյուսիս, այլ զուգահեռ գծերով՝ արևմուտք-արևելք, հարավ-հյուսիս: Այդ զուգահեռությունն ապահովում է քառակուսու առկայությունը, այսինքն աշխարհի չորս կողմերը տրված են ոչ թե շրջանով, այլ քառակուսիով, ավելի ճիշտ՝ քառակուսին ներառնված է շրջանի մեջ, քառակուսին էլ իր հերթին արտահայտվում է խաչով, սակայն ավելի շուտ ոչ թե հավասարաթև, այլ X-ձև՝ հորիզոնական: «Եւ քառակուսին զխաչն նշանակէ, ըստ որում պարգևեցան ի վեր զչորս կողմն աշխարհի, դարձեալ զի և չորիւք

[1] Տես. Շաւարշ, Գաւառական հարսանիք//Վանտոսք, 1912, էջ 225:
[2] Տես. Ս. Հմայակյան, Վանի թագավորության պետական կրոնը, Եր., 1990, էջ 13-14:
[3] Տես. Юань Кэ, Мифы Древнего Китая, М., 1987, с. 90-91, 375-376:

առաքինութեամբ նուիրեմք զպատարագն, չորիւք մասամբ տարակն հիւթոց սրբութեամբ ընծայեմք զմեզ…»[1]:

Խաչը առհասարակ ամբողջականության, քառորդության, այսինքն չորսը մեկի մեջ գաղափարի արխետիպային առավել հայտնի կերպարն է: Այդ իսկ պատճառով կապված է քառորդության այլ դրսևորումների հետ. աշխարհի չորս կողմ (նույնն է՝ չորս հողմ), տարվա չորս եղանակներ, չորս հիմնարար տարրեր և այլն[2]:

Եզնիկ Կողբացին, խոսելով չորս տարերքների մասին ըստ հիմնական հատկությունների[3], համադրում է դրանք աշխարհի չորս կողմ-անկյուններին. «Եվ ահա տեսնում ենք այս աշխարհն ինչպես մի կառք՝ լծված չորս երիվարներով՝ տաքությամբ, ցրտությամբ, չորությամբ ու խոնավությամբ: Եվ կա կառավարող մի գաղտնի զորություն, որն այդ չորս հակառակորդները հաշտ ու խաղաղ պահելով, ենթարկում է իրեն: Այդ կառքը բոլոր ուղղություններով է ընթանում: Երբ դեպի արևելք է ընթանում, որևէ արգելք չկա, որ դեպի արևմուտք արշավի, և երբ դեպի հյուսիս է սլանում, որևէ արգելք չկա, որ դեպի հարավ սլանա, որովհետև կառավարողի ձեռքը ունակ է դեպի ամեն կողմ ուղղելու և տիեզերքի չորս անկյուններն արշավել տալու»[4]: Եզնիկ Կողբացին տիեզերքը ներկայացնում է որպես տուն, ուր առաստաղը երկինքն է, հատակը՝ երկիրը, դրանց միջև վառվող ճրագը արեգակն է, իսկ տան չորս անկյունները աշխարհի չորս կողմերն են[5]:

Անդաստանի ծեսը նույնպես կատարվում է շրջան-քառակուսիով, աշխարհի կողմերը տրվում են հորիզոնական, սակայն այս դեպքում արդեն ոչ թե X, այլ հավասարաթև խաչի ձևով. սկզբում արևմուտք-արևելք, հետո արևելք-արևմուտք, մեկ քարորդ վերադարձ և հյուսիս-հարավ, հետո հարավ-հյուսիս: Այսպիսով, երկու շրջան է գծվում, մեջը քառակուսի, որում ամփոփվում է խաչը՝ ծայրերին ունենալով աշխարհի յուրաքանչյուր կողմը:

Յուրաքանչյուր Անդաստանի ընթացքում «վերարտադրվում է» տաճարի ներքին կառուցվածքը՝ տիեզերակառույցը, այսինքն Անդաստանի ծեսով ամեն անգամ վերահաստատվում է տիեզերքի մոդելը, կրկնվում է տիեզերքի արարումը: Կարող ենք փաստել, որ տիեզերակառույցի վերահաստատումը Անդաստանի ծեսի կարևոր գործառույթն է, և այս դեպքում Անդաստանը կատարվում է եկեղեցու մեջ կամ շուրջ:

Սակայն Անդաստանի ծեսն ունի նաև երկրորդ գործառույթը, որը վերականգնում է ինչ-ինչ պատճառներով խաթարված տիեզերակառույցը: Այս դեպքում Անդաստան է իրականացվում դաշտերում և այգիներում: Հ. Աճառյանն «անդաստան»-ը մեկնում է որպես «անդ-հանդ» (յանդ) արմատից և «աստան» ածանցից առաջացած բառ (օր. Հայ+աստան, Հնդկ+աստան և այլն): «Անդ» արմատն ունի նաև «տուն» իմաստը, քանի որ հին նահապետական կյանքում տունն ու արտը անբաժան էին իրարից,

---

[1] Ա. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 166-167: Ա. Մնացականյանն այս հատվածի հեղինակն է համարում Վարդան Այգեկցուն և նշում է, որ խաչը, որպես չորս հիմնական տարրերի խորհրդանշան, առաջնային է, իսկ աշխարհի չորս կողմերը՝ ավելի ուշ ներմուծված:

[2] Այս մասին մանրամասնորեն՝ Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան, Խաչ-թրի խորհրդանշական իմաստի որոշ կողմեր, XXI դարի կրոնական մարտահրավերները և Հայաստանը, Եր., 2011, էջ 61-64:

[3] Այստեղ Կողբացին ազդված է միլեթյան դպրոցի Ք. ա. 6-րդ դ. հեղինակ Անաքսիմանդրոսի ուսմունքից, տես. Ф. Кэссиди, От мифа к логосу, М., 1972, с. 126.

[4] Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Եր., 1970, էջ 36-37:

[5] Նույն տեղում, էջ 35:

որպես օրինակ՝ «տուն-տեղ»[1]: Այսինքն Անդաստանի ծեսի հիմնական նպատակներից է օրհնել տուն-տեղը: Եթե ընդունենք Աճառյանի այս մեկնությունը, ապա դաշտերի և այգիների օրհնությունը պետք է որ ավելի առաջնային լիներ, քանի որ ինքնին «անդաստան» բառը պահպանել է հերկվող դաշտի նշանակությունը: Հետագայում, երկրի ավելի զարգանալով, պետական միավորումների և կենտրոնացված եկեղեցական կառույցի առաջանալով, արդեն օրհնվում են հայրապետությունը, թագավորությունը, երկիրը, քաղաքներն ու վանքերը:

Գ. Հակոբյանը Անդաստանը նկարագրում է որպես շուրջպար. «Մասնակցում են դպիրներն ու սարկավագները, աջակողմյան և ձախակողմյան բոլոր տիրացուները, կերոն բռնող բոլոր պատանիները և ինքը՝ քահանան՝ պարի մեջտեղում: Անդաստան եկեղեցական պարը կատարվում է եկեղեցում, նրա շուրջը, *երաշտի տարիներին ամռանը՝ գյուղի հանդերում, որ այդ պարի ու երգի զորությամբ անձրև գա*[2] (շեղագիրը՝ մերն է – Ա. եպ. Ժ., Կ. Հ.)»: Երաշտը առաջանում է տիեզերքի խաթարման դեպքում և վնասում է պտղաբերությանը, ուստի Անդաստանի ծեսի կատարումով անձրև է ապահովվում և վերանորոգվում է տիեզերքը:

Վ. Տեր-Մինասյանը նկարագրում է Խաղողօրհնեքին ու Ճրագաքաղին կատարվող Անդաստանը: Շողակաթի ցերեկը հավաքվում էին, գալիս էր շուրջառազգեստ քահանան՝ աջ ձեռքում մկրատ, իսկ ձախում խաչը բռնած: Վառած մոմակալներով ու կանթեղներով տիրացուները երգում են «Արեւելք գերարփին եւ օթարան լուսածին» շարականը և գնում են դրախտը, եթե վանք ունեն[3]: Եթե չունեն, գյուղի կամ քաղաքի երեցփոխանի այգին են գնում, ուր ճշտորեն կատարում են Անդաստանի արարողությունը: Անդաստանն ավարտելուց հետո դպրապետն ուժեղ ձայնում է. «Օրհնեա Տէր»: Ժամարարը ձայնում է. «Օրհնեսցի ողկույզ... Այգւոյս այս նշանաւ սուրբ Խաչւոյս եւ սուրբ Աւետարանաւս և աւուրս շնորհիւ», հետո ժամարարը վերցնում է մկրատ կամ դանակ և կտրելով մի ողկույզ ու ցույց տալով ժողովրդին, բարեմաղթում է. «Երկնքի լոյս Թուխ մանուկներէն ցօղուած են այս մեր այգիներու ողկոյզները. Աստուած օրհնեց մեր այգիները Նոյի տապանով, Քրիստոսի սուրբ խաչով, Աստուածածնի արցունքով, Լուսավորչի լոյս հաւատքով.

Հաց ու գինի

Տէր կենդանի

Թէ մեր այգիներն ալ պիտի ըլլան միշտ դալար եւ ողկույզներն ըլլան միշտ անսպառ»[4]:

Այսինքն Անդաստանից հետո վերահաստատվում էր տիեզերքը, կրկնվում էր արարչագործությունը. երկնքի լույս, սուրբ նահատակ Թուխ Մանուկները ջրել են ողկույզները, իսկ Աստված կրկին անգամ օրհնում և պահպանում է բերքը քրիստոնեական սրբերով և զորություններով՝ Նոյի տապանով, Քրիստոսի սուրբ Խաչով, Ս.

---

[1] Տես. Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. Ա., Եր., 1971, էջ 186, Անդ բառի տակ:

[2] Գ. Հակոբյանը «շուրջպար» գրելով գուցե նկատի ունի «պարառեալ», այսինքն գործածում է շրջանաձև իմաստով, իսկ գուցե հենց պար (պարել) նկատի ունի, համենայնդեպս խոսք չկա, որ եթե պարում էին, ապա ինչ շարժումներ էին անում: Հակոբյանի նյութը վերաբերում է Բասենին, հնարավոր է, որ Բասենում Անդաստանը ուներ իր առանձնահատկությունները և արտահայտվում էր պարի միջոցով (տես. Գ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 17):

[3] Վանքերի պարտեզները կոչվում են դրախտ:

[4] Տես. Վ. Տեր-Մինասեան, Անգիր դպրութիւն և հին ովորոյթներ, Կ. Պոլիս, 1904, էջ 156-157:

Աստվածածնի արցունքով և Լուսավորչի լույս հավատով՝ քրիստոնեությամբ, որպեսզի այգիները միշտ պտուղ տան:

Հավանական է, որ Անդաստանի ծեսը մեզ է հասել նախաքրիստոնեական ժամանակներից: Այդ են վկայում Անդաստանի ծեսի կատարման ժամկետները: Տարվա Անդաստանի առաջին ծեսը կատարվում է Տրնդեզի օրը, երբ կիսվում էր ձմեռը և կատարվում էին ցանքսի, հացահատիկի պահպանման ծեսերը[1]: Տրնդեզի խարույկի ծխի ուղղությունը ցույց էր տալիս, թե որ հողերն են այդ տարի առատ բերք տալու, մոխիրը այդ նույն նպատակով շաղ էին տալիս հանդերում և այգիներում[2]: Այսինքն Տրնդեզը նախապատրաստում էր երկրագործական տարվա սկիզբը, ուստիև առաջին Անդաստանն էլ կատարվում էր Տրնդեզին: Այդ օրը համարվում էր «օր իջանելոյ արեւու ի հողս»[3], ուրեմն և ծիսական խարույկը կոչված էր նպաստելու այդ տիեզերական երևույթին: Հնարավոր է, որ Անդաստանը էլ ավելի էր հզորացնում կրակի ու հողի միացման զորությունը:

Այնուհետև Անդաստան է կատարվում երկրագործության համար կարևորագույն համարվող Ծաղկազարդին, երբ ծաղկում են առաջին ծառերը, Ս. Զատիկը, երբ բնությունն արդեն արթնացել է, հետո ամեն կիրակի, մինչդեռ կատարվում է Խամահանեքը, վարը և ցանքսը, մինչև Համբարձում, երբ գագաթնակետին է հասնում բնության զարթոնքը, հասունանում են առաջին պտուղները, ծաղկում է խաղողը և խոտհունձքի շրջանն է: Հետո ամեն կիրակի մինչև Վարդավառ, երբ երաշտների վտանգը մեծ էր և հանդերը կարող էին չորանալ, Խաղողօրհնեքին, երբ հասնում էր բերքը, մասնավորապես՝ խաղողը: Անդաստանի տարվա վերջին արարողությունը կատարվում է Խաչվերացին, երբ կատարվում է աշնանացանը և ավարտվում է երկրագործական տարին: Խաչվերացից մինչև Տրնդեզ Անդաստան չի կատարվում: Տոների մեջ, որոնց ընթացքում Անդաստան է կատարվում, բացակայում է Տաղավար առաջին տոնը՝ Քրիստոսի Ս. Ծնունդը, որ շատ մեծ նշանակություն ունի քրիստոնեության համար: Սակայն այն տոնվում է խոր ձմռանը, երբ երկրագործական աշխատանքներ չեն կատարվում:

Բուն հայկական հեթանոսական ծես լինելու հավանականության մասին է խոսում նաև այն փաստը, որ Անդաստանը բնորոշ է միայն Հայ Առաքելական Եկեղեցուն, իսկ քանի որ քրիստոնեությունը համաշխարհային կրոն է, ապա այդ դեպքում այն պետք է կատարեին այլ Եկեղեցիներ ևս:

Մյուս կողմից, եթե Անդաստանն իրոք նախաքրիստոնեական ժամանակներից է մեզ հասել, ապա մենք չենք կարող ասել, թե ինչպիսի արարողակարգ է ունեցել, ինչ առարկաներ են գործածել և ովքեր են մասնակցել նախքան Հայոց Դարձը:

Այսպիսով, Կաթողիկե եկեղեցին համախմբում ու կարգավորում է աշխարհն իր ամբողջության մեջ՝ ուղղաձիգ և հորիզոնական կոորդինատներով՝ արտացոլելով երկնային նախատիպը: Եկեղեցու մեջ կամ դրա շուրջ Անդաստան կատարելով՝ ամեն անգամ վերստին վերահաստատվում է հայկական քրիստոնեական աշխարհի մոդելը՝

---

[1] Տես. Լ. Սիմոնյան, Տոմարային ծիսաշար, հատ. 2, Սուրբ Սարգիս, Տրնդեզ, Բարեկենդան, Եր., 2007, էջ 72:

[2] Նույն տեղում, էջ 50-51:

[3] Տես. Ա. Մխիթարեանց, Փշրանքներ Շիրակի ամբարներից//Էմինեան ազգագրական ժողովածու, գ. Ա, Մոսկուա-Վաղարշապատ, 1901, էջ 258:

հայ ժողովրդին համախմբելով եկեղեցու և քրիստոնեական հավատքի շուրջ: Օրհնվում են աշխարհի ծագերը, որոնց համապատասխանում են՝ արևելք՝ Հայոց հայրապետություն – ոգեղենություն, արևմուտք՝ Հայոց թագավորություն – պետականություն, հարավ՝ երկիր – բերք և հյուսիս՝ բնակավայրեր և ժողովուրդ: Անդաստանի ծեսով վերահաստատվում էր իդեալական հայրենիքի մոդելը՝ խարսխված չորս հիմնասյուների վրա՝ հավատ, պետականություն, բարօրություն և միասնականություն: Անդաստան էր կատարվում նաև տիեզերքի խաթարման դեպքում՝ երաշտ, կարկուտ, սառնամանիք և այլն՝ Անդաստանի օգնությամբ վերանորոգելով տիեզերքը: Հաշվի առնելով «անդաստան» բառի իմաստն ու հատկապես կատարման ժամանակաշրջանը՝ հնարավոր է, որ այն մեզ է հասել նախաքրիստոնեական ժամանակներից և հանդիսանում է բուն հայկական հեթանոսության ժառանգությունը՝ քրիստոնեական վերաիմաստավորմամբ:

Епископ Анушаван Жамкочян, Карен Оганнисян, Обряд Андастан Армянской Апостольской Святой Церкви, – Обряд Андастан совершается только Армянской Апостольской Святой Церковью. Он имеет точный временной цикл исполнения и совершается в ритуальном комплексе 15 церковных праздников – начиная от Сретения и заканчивая праздником Воздвижения Креста Господня. Первопрестольная кафедральная церковь объединяет и упорядочивает космос в своем единстве – согласно виртикальным и горизонтальным координатам – отражая небесный архетип. Совершая обряд Андастан внутри или вокруг церкви, каждый раз заново восстанавливается армянская христианская модель мира – сплачивая армянский народ вокруг Церкви и христианства. Благославляются стороны света, которые олицетворяют соответственно: восток – Армянское патриаршество – духовность, запад – Армянское царство – государственность, юг – страна – урожай и север – поселения и народ. Таким образом, обрядом Андастан восстанавливалется идеальная модель родины, базирующаяся на четырех столпах – вера, государственность, благополучие и сплоченность.

Bishop Anushavan Zhamkochyan, Karen Hovhannisyan, The Ritual Andastan of The Saint Apostolic Church of Armenia, – The ceremony of Andastan is practiced by the Armenian Apostolic Church only. It has its precise time span of implementation and is executed within the ritual complex of the 15 church festivals starting with Candlemas and finishing with Exaltation of the Cross. The Supreme Cathedral fuses and organizes the cosmos in its unity according to vertical and horizontal coordinates and reflecting the celestial archetype. Performing the ritual of Andastan in the church or around it, every time the Armenian-Christian model of universe is recreated, hoarding the Armenian nation around the Church and Christianity. The cardinal directions are blessed representing respectively: East – Armenian Patriarchate – spirituality, West – Armenian Kingdom – statehood, South – the land – harvest, and North – settlements and folk. Thus, by the ritual of Andastan the ideal model of the homeland is restored, based on the four pillars - faith, statehood, wealth and unity.

Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյան – պատմ. գիտ. դոկտոր, ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի դեկան, Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգևոր տեսուչ:

Կարեն Հովհաննիսյան – ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող: